3
ԴԵԿՏԵՄԲԵՐ
2024

Luys Lnyu®

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

II. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2

Ռազմական կամ արտակարգ դրության հայտարարման հիմքերը 4

Դեպք 1. Ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը մինչև թեկնածուներ առաջադրելու համար նախատեսված ժամկետի սկիզբը 6

Դեպք 2. Ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը մինչև ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելը 7

Դեպք 3. ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահից հետո 7

III. ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԾԻՔԸ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 8

IV. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 10

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարը 2023թ. հուլիսի 12-ին Վենետիկի հանձնաժողովին ուղղված նամակով խնդրել էր կարծիք տրամադրել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում (Օրենք) և հարակից օրենքներում նախատեսվող փոփոխությունների նախագծի վերաբերյալ (Նախագծերի փաթեթ):

Նախագծերի փաթեթով ի թիվս այլոց կարգավորվում են ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրությունների անցկացման հետ կապված հարաբերությունները:

Վենետիկի հանձնաժողովի կողմից Նախագծերի փաթեթի վերաբերյալ կարծիքը (Վենետիկի հանձնաժողովի կարծիք)[1] ընդունվել է 2023թ. հոկտեմբերի 6-7-ին անցկացված լիագումար նիստերի ընթացքում:

Այնուհետև, 2023թ. հոկտեմբերի 18-ից մինչև 2023թ. նոյեմբերի 2-ը Նախագծերի փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում[2]: Նշված ժամանակահատվածում Նախագծերի փաթեթի վերաբերյալ ստացվել է ընդամենը մեկ առաջարկություն, իսկ քվեարկության արդյունքներն են՝ 3 կողմ, 0 դեմ:

Ազգային ժողովը 2024թ. հոկտեմբերի 24-ին առաջին ընթերցմամբ ընդունեց Նախագծերի փաթեթը:

II. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախագծերի փաթեթով նախատեսվող հիմնական փոփոխություններից մեկը վերաբերում է ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ ընտրությունների նշանակմանը և անցկացմանը:

Ելնելով Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից, ինչպես գործող կարգավորումները, այնպես էլ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծը (Նախագիծ) սահմանում են, որ ռազմական

[1] Venice Commission and ODIHR, Joint Opinion on Draft Amendments to the Electoral Code and Related Legislation, CDL-AD(2023)030, Strasbourg/Warsaw, 9 October 2023, կարծիքը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2023)030-e:

[2] https://www.e-draft.am/projects/6370:

կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ չեն նշանակվում և չեն անցկացվում: Միակ բացառությունը վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նշանակմանը և անցկացմանը, մասնավորապես՝ այն դեպքին, երբ արտակարգ դրություն է հայտարարվում ոչ թե Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, այլ միայն դրա մի մասում: Տվյալ դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակվում և անցկացվում են միայն այն համայնքներում, որոնց տարածքում արտակարգ դրություն հայտարարված չէ:

Նախագծով ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ ընտրությունների նշանակման և անցկացման վերաբերյալ կարգավորումները կարելի է բաժանել երեք մասի՝

1) ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը ընտրությունների նշանակումից հետո՝ մինչև թեկնածուներ առաջադրելու համար նախատեսված ժամկետի սկիզբը,
2) ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը թեկնածուներ առաջադրելու համար նախատեսված ժամկետը սկսվելուց հետո՝ մինչև ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահը,
3) ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահից հետո՝ մինչև համապատասխանաբար նորընտիր Ազգային ժողովի կազմավորվումը, ավագանու ձևավորումը կամ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները մարզպետին ներկայացնելը:

Կառավարությունը օրինագծի հիմնավորումներում արտակարգ և ռազմական դրության վերաբերյալ նշում է հետևյալը.

«**1.2. Ընտրությունների նշանակումը և անցկացումը արտակարգ և ռազմական դրության դեպքում**: Սահմանադրությունը, ինչպես նաև Ընտրական օրենսգիրքն արգելում են ընտրությունների նշանակումն ու անցկացումը արտակարգ և ռազմական դրության պայմաններում: Ներկայումս Ընտրական օրենսգիրքը կարգավորում է միայն ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների

նշանակման, ինչպես նաև ընտրություններ նշանակելուց հետո անհրաժեշտ գործողությունների իրականացման հետ կապված ժամկետների հարցը: Սակայն ընտրություններ նշանակվելուց հետո կամ քվեարկության օրվանից հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում կարգավորված չեն ընտրական գործընթացի իրականացման հարցերը: Նախագծով կարգավորվում են ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրությունների անցկացման հետ կապված հարաբերությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմական կամ արտակարգ դրությունը էականորեն կարող է փոխել երկրում տիրող իրավիճակը, այդ թվում՝ քաղաքական իրավիճակը, ուստի առաջարկվում է ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում ընտրական գործընթացը դադարեցնելու կամ կասեցնելու մոդելները, իսկ ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ ընտրական գործընթացը կա՛մ վերսկսելու, կա՛մ կրկին սկսելու վերաբերյալ կարգավորումներ՝ հնարավորություն տալով հաշվի նստել նոր իրողությունների հետ»:

Նման վերացական «հիմնավորումը», մասնավորապես, որևէ կերպ չի անդրադառնում այն կարևոր խնդրին, թե ինչու է անհրաժեշտ քվեարկության անցկացումից հետո, երբ մտցվել է արտակարգ կամ ռազմական ռեժիմ, նոր քվեարկություն անցկացնելը: Երբ քաղաքացիները արդեն իսկ ամբողջությամբ արտահայտել են իրենց ընտրական կամքը, ապա ի՞նչ նոր իրողություններ կարող են չեղարկել քաղաքացիների արտահայտած կամքը:

Ռազմական կամ արտակարգ դրության հայտարարման հիմքերը

Նախագծով նախատեսվող փոփոխությունների ազդեցությունը համակողմանի գնահատելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն հանգամանքներին, որոնց առկայության դեպքում հնարավոր է հայտարարել արտակարգ կամ ռազմական դրություն: Արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Սահմանադրությամբ և համապատասխանաբար «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքներով:

Ռազմական դրություն

Կառավարությունը հայտարարում է ռազմական դրություն (Սահմանադրություն, հոդված 119, մաս 1)՝

- Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման,

- դրա անմիջական վտանգի առկայության կամ
- պատերազմ հայտարարվելու դեպքերում:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ռազմական դրություն հայտարարելու հիմքերն են՝

- այլ պետության զինված ուժերի ներխուժումը Հայաստանի Հանրապետության տարածք, նման ներխուժման հետևանքով Հայաստանի Հանրապետության ցանկացած տարածքի բռնազավթումը,
- այլ պետության զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներխուժելու անմիջական վտանգի առկայությունը,
- այլ պետության զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքի ռմբահարումը,
- այլ պետության զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կամ այլ զորքերի վրա հարձակումը՝ անկախ վերջիններիս տեղակայման վայրից,
- այլ պետության գործողությունները, որոնք թույլ են տալիս երրորդ պետությանը իր տարածքն օգտագործել Հայաստանի Հանրապետության նկատմամբ զինված հարձակում իրականացնելու համար,
- այլ պետության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ուղարկված կամ նրա անունից գործող զինված խմբերի, ապակայունացնող ուժերի կամ վարձկանների զինված ոտնձգությունները Հայաստանի Հանրապետության նկատմամբ:

Արտակարգ դրություն

Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում Կառավարությունը հայտարարում է արտակարգ դրություն, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին: (Սահմանադրություն, հոդված 120, մաս 1):

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով՝ մասնավորեցվում են Սահմանադրությամբ նախատեսված «սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի» դեպքերը, այն է՝

- Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում, ներառյալ՝

- Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու,
- իշխանությունը զավթելու փորձերը,
- զինված խռովությունները,
- զանգվածային անկարգությունները,
- բռնի գործողություններով ուղեկցվող ազգային, ռասայական, կրոնական հակամարտությունները,
- ահաբեկչական ակտերը,
- հատուկ նշանակության օբյեկտների գրավումը կամ շրջափակումը,
- անօրինական զինված միավորումների ստեղծումը և գործունեությունը,
- արտակարգ իրավիճակները:

Դեպք 1. Ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը մինչև թեկնածուներ առաջադրելու համար նախատեսված ժամկետի սկիզբը

Համաձայն Նախագծի, եթե ռազմական կամ արտակարգ դրություն է հայտարարվում Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակվելուց հետո, սակայն մինչև թեկնածուներ առաջադրելու համար նախատեսված ժամկետի սկիզբը, ապա այդ պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է դադարեցված (Նախագիծ, հոդված 3):

Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելուց հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովը անհապաղ հանդես է գալիս Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական գործընթացը դադարեցված լինելու մասին հայտարարությամբ և դրա վերաբերյալ ծանուցում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին և տեղամասային ընտրական հանձնաժողովներին:

Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով Ազգային ժողովի չանցկացված ընտրությունները նշանակվում են Հանրապետության նախագահի հրամանագրով՝ ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 7 օր հետո, և անցկացվում են ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան 50 և ոչ ուշ, քան 65 օր հետո (Սահմանադրության 91-րդ հոդված, մաս 2):

Այս փուլում ընտրական գործընթացի դադարեցումը Նախագծի նվազ խնդրահարույց կարգավորումներից է, քանի որ այս փուլում ընտրողները դեռևս չեն իրացրել իրենց ընտրություն կատարելու սահմանադրական իրավունքը, և,

հետևաբար, ընտրությունների վրա քաղաքական դրդապատճառներով ազդելու շահագրգռվածությունը նվազագույն է:

Դեպք 2. Ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը մինչև ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելը

Եթե ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների թեկնածուներ առաջադրելու համար նախատեսված ժամկետը սկսվելուց հետո՝ մինչև ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահը, ապա ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է կասեցված, որից հետո ընտրական գործընթացի վերսկսումը պարտադիր ենթադրում է նոր քվեարկության կազմակերպում և անցկացում:

Ի տարբերություն առաջին դեպքի՝ այս փուլում ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը ոչ թե դադարեցնում, այլ կասեցնում է ընտրական գործընթացը: Ընտրական գործընթացի վերսկսման համար, սակայն, պարտադիր պահանջ է սահմանված նոր քվեարկության կազմակերպումը և անցկացումը:

Ընթացակարգային առումով, եթե առաջին դեպքում ընտրական ամբողջ գործընթացը (թեկնածուների առաջադրում, ընտրական ցուցակների գրանցում, նախընտրական քարոզչություն) սկսվում է սկզբից, ապա այս փուլում ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը հանգեցնում է միայն նոր քվեարկության կազմակերպմանը: Կարևոր է նշել, որ ի տարբերություն առաջին դեպքի, երբ քաղաքացիները դեռևս չեն իրացրել իրենց ընտրական իրավունքը, ապա երկրորդ դեպքում *նշանակվում են նոր ընտրություններ այն բանից հետո, երբ քաղաքացիների ընտրական կամքն ամբողջությամբ արտահայտված է լինում*:

Դեպք 3. Ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահից հետո

Եթե ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվում է Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահից հետո մինչև համապատասխանաբար՝ նորընտիր Ազգային ժողովի կազմավորվումը, ավագանու ձևավորումը կամ

մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները մարզպետին ներկայացնելը, ապա ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է կասեցված:

Այս փուլում ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը Նախագծով նախատեսված միակ դեպքն է, որը չի հանգեցնում նոր ընտրությունների անցկացմանը, այլ միայն կասեցնում է ընտրական գործընթացը:

Նախագծով նախատեսվում է, որ Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելուց և դրանք արձանագրությամբ վավերացնելուց հետո կասեցված ընտրական գործընթացը վերսկսվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո: Մասնավորապես, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում պատճառաբանված որոշում է կայացնում ընտրական գործընթացի վերսկսման մասին, որում նշում է կատարվում ընտրական գործընթացը վերսկսելու օրվա և ընտրական գործընթացի այն պահի վերաբերյալ, որից պետք է շարունակվի ընտրական գործընթացը:

III. ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԾԻՔԸ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ արտակարգ դրության պատճառով ընտրությունները հետաձգելու հնարավորությունը սկզբունքորեն ընդունելի է, քանի որ նման պայմաններում ընտրությունների անցկացման դեպքում առկա է ընտրական հիմնարար սկզբունքների խաթարման վտանգ: Միևնույն ժամանակ, Վենետիկի հանձնաժողովը ընդգծում է, որ ընտրական գործընթացի կասեցումը թույլատրելի է միայն այն չափով, որքան անհրաժեշտ է տվյալ իրավիճակում[3]: Հետևաբար, ընտրական իրավունքի սահմանափակումը պետք է լինի համաչափ, որպեսզի նվազագույնի հասցվի ընտրական գործընթացը քաղաքական պատճառներով հետաձգելու ռիսկը: Նման ռիսկերը կառավարելու համար Վենետիկի հանձնաժողովը առաջարկում է ներդնել՝

- դատական վերահսկողություն,
- քաղաքական կուսակցությունների և այլ շահագրգիռ կողմերի լայն ներգրավվածություն,
- հետաձգման ժամկետի սահմանափակում,

[3] Վենետիկի հանձնաժողովի կարծիք, 23:

- ընտրական գործընթացի կասեցման անհրաժեշտության համար լայն համաձայնության անհրաժեշտություն[4]:

Այս համատեքստում Վենետիկի հանձնաժողովը կարևորում է նաև նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման հարցը: Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ եթե նախընտրական քարոզարշավն արդեն իսկ սկսվել է մինչև արտակարգ դրության հայտարարումը, ապա թեկնածուները և կուսակցությունները կարող են զգալի գումար ծախսած լինել: Նման պայմաններում ընտրությունները հետաձգելու և քարոզարշավը նորից սկսելու փոխարեն, եթե հնարավոր է, ապա ավելի լավ կլինի շարունակել ընտրական գործընթացները՝ թեկնածուների համար հետագա անբարենպաստ ազդեցությունները և ֆինանսական ծախսերը չեզոքացնելու համար:

Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ չնայած Հայաստանի կառավարությունը, ինչպես նաև մի շարք ընդդիմադիր կուսակցություններ ու հասարակական կազմակերպություններ առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ տվել են դրական կարծիք, պարտադիր է ուշադրության կենտրոնում պահել արտակարգ դրության հնարավոր հետևանքները ընտրական գործընթացի վրա՝ հաշվի առնելով հնարավոր չարաշահումների վտանգը[5]: Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ ընտրական գործընթացը, թեև սկզբունքորեն կարող է կասեցվել, այնուամենայնիվ, արդեն իսկ մեկնարկած ընտրական գործընթացի կասեցումը կամ ավելին՝ դադարեցումը խնդրահարույց է: *Ընտրական գործընթացի դադարեցումն այն բանից հետո, երբ ընտրողները արդեն քվեարկել են (քվեարկության օրը կամ դրանից հետո), առավել վտանգավոր է:* Ընտրողների կամքի արտահայտումից հետո (թեև դեռ արդյունքները հայտնի չեն, քանի որ ձայները դեռ պետք է հաշվվեն) այն պետք է հարգվի և պաշտպանվի: Անգամ արտակարգ իրավիճակների դեպքում ընտրական գործընթացն այս փուլում չպետք է դադարեցվի առանց բավարար հիմքի: Թեև իշխանությունները կարող են չկարողանալ այդ ընթացքում ամփոփել ձայները և որոշել արդյունքները, այնուամենայնիվ, հնարավոր է հետաձգել ձայների հաշվարկը մինչև արտակարգ դրության ավարտը: Եթե արտակարգ դրությունը տևի երկար, ապա հաշվարկը պետք է կազմակերպվի նույնիսկ արտակարգ դրության ժամանակ. կախված հանգամանքներից՝ այն կարող է կազմակերպվել, օրինակ, արտակարգ

[4] Վենետիկի հանձնաժողովի կարծիք, 24:
[5] Վենետիկի հանձնաժողովի կարծիք, 25:

իրավիճակի վայրից հեռու կամ կարող է իրականացվել իրավիճակի բարելավումից հետո (թեև արտակարգ դրությունը դեռևս չի դադարել)[6]:

Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները կարող են էական վտանգ ներկայացնել, քանի որ արտակարգ կամ ռազմական դրության հայտարարումը կարող է օգտագործվել ոչ թե որպես արտակարգ իրավիճակին արձագանքելու անհրաժեշտ միջոց, այլ կարող է օգտագործվել ի նպաստ քաղաքական շահերի:

Այս խնդիրները կանխելու համար Վենետիկի հանձնաժողովը և ԺՀՄԻԳ-ն առաջարկել են մի շարք փոփոխություններ:

Նախ, որպես հիմնարար սկզբունք՝ նախագծով ընտրական գործընթացի կասեցման հնարավորությունը պետք է գերակայի ընտրական գործընթացի ամբողջական դադարեցման նկատմամբ՝ կախված որոշակի իրավիճակից և արտակարգ դրության տևողությունից: Ընտրական գործընթացը, երբ դա հնարավոր է, պետք է վերսկսվի արտակարգ դրության ավարտից հետո: Ընտրական գործընթացի ամբողջական դադարեցումը պետք է դիտարկվի որպես ծայրահեղ միջոց, երբ չկա այլ՝ ավելի մեղմ միջոց, կամ երբ արտակարգ դրությունը շարունակվում է երկար ժամանակ:

Երկրորդ՝ պետք է ընդհանրապես հրաժարվել Նախագծի այն դրույթներից, որոնք հնարավորություն են տալիս ընտրողների կողմից քվեարկելուց հետո կասեցնել ընտրական գործընթացը, և պետք է նախատեսվեն ձայների հաշվարկի այլընտրանքային մեխանիզմներ, եթե արտակարգ դրության պատճառով սովորական մեխանիզմներն իրագործելի չեն:

IV. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

- Նախագծով նախատեսվող հիմնական փոփոխություններից մեկը վերաբերում է ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ ընտրությունների նշանակմանը և անցկացմանը:
- Նախագծով ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ ընտրությունների նշանակման և անցկացման վերաբերյալ կարգավորումները կարելի է բաժանել երեք մասի.
  1) Համաձայն Նախագծի, եթե ռազմական կամ արտակարգ դրություն է հայտարարվում Ազգային ժողովի կամ տեղական

[6] Վենետիկի հանձնաժողովի կարծիք, 26:

ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակվելուց հետո, սակայն մինչև թեկնածուներ առաջադրելու համար նախատեսված ժամկետի սկիզբը, ապա այդ պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է դադարեցված:

2) Եթե ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների թեկնածուներ առաջադրելու համար նախատեսված ժամկետը սկսվելուց հետո մինչև ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահը, ապա ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է կասեցված, որից հետո ընտրական գործընթացի վերսկսումը պարտադիր ենթադրում է նոր քվեարկության կազմակերպում և անցկացում:

3) Եթե ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվում է Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահից հետո մինչև համապատասխանաբար՝ նորընտիր Ազգային ժողովի կազմավորվումը, ավագանու ձևավորումը կամ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները մարզպետին ներկայացնելը, ապա ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է կասեցված:

- Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ ընտրական գործընթացը չնայած սկզբունքորեն կարելի է կասեցնել, այնուամենայնիվ, արդեն իսկ մեկնարկած ընտրական գործընթացի կասեցումը կամ ավելին՝ դադարեցումը խնդրահարույց է:
- *Ընտրական գործընթացի դադարեցումն այն բանից հետո, երբ ընտրողները արդեն քվեարկել են (քվեարկության օրը կամ դրանից հետո), առավել վտանգավոր է: Ընտրողների կամքի արտահայտումից հետո այն պետք է հարգվի և պաշտպանվի*:
- Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները կարող են էական վտանգ ներկայացնել, քանի որ արտակարգ կամ ռազմական դրության հայտարարումը կարող է օգտագործվել ոչ թե որպես արտակարգ իրավիճակին արձագանքելու

անհրաժեշտ միջոց, այլ կարող է օգտագործվել ի նպաստ քաղաքական շահերի:

- Վենետիկի հանձնաժողովը առաջարկում է, որ ընտրական գործընթացի կասեցման հնարավորությունը գերակայի ընտրական գործընթացի ամբողջական դադարեցման նկատմամբ: Ընտրական գործընթացը, երբ դա հնարավոր է, պետք է վերսկսվի արտակարգ դրության ավարտից հետո: Ընտրական գործընթացի ամբողջական դադարեցումը պետք է դիտարկվի որպես ծայրահեղ միջոց, երբ չկա այլ ավելի մեղմ միջոց, կամ երբ արտակարգ դրությունը շարունակվում է երկար ժամանակ:
- Վենետիկի հանձնաժողովը առաջարկում է ընդհանրապես հրաժարվել Նախագծի այն դրույթներից, որոնք հնարավորություն են տալիս ընտրողների կողմից քվեարկելուց հետո կասեցնել ընտրական գործընթացը և նախատեսել ձայների հաշվարկի այլընտրանքային մեխանիզմներ, եթե արտակարգ դրության պատճառով սովորական մեխանիզմներն իրագործելի չեն:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: